# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան
(Կնքման վայրը)

«06» 02 2020թ.

«28» փետրվարի 2018 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման ՆԲԸԱՀԾՁԲ-10-15-1 պայմանագրի (այսուհետ՝ **Պայմանագիր**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ **Մատակարար**), ի դեմս գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ **Սպառող**), ի դեմս նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «**Կողմ**», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հաստատել **Պայմանագրին** կից 6-րդ հավելվածի 10-րդ կետում նշված «ՀԷՑ» ՓԲԸ բաժանորդներ ՀՀ Պաշտպանության նախարարության ստորաբաժանումների ցանկը:
2. Համաձայն սույն համաձայնագրին կից թիվ 1 և թիվ 2 հավելվածների հաստատել էլեկտրական էներգիայի մատակարարման **Պայմանագրին** կից 6-րդ հավելվածի 13-րդ կետում նշված
   2.1 էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության գնման ժամանակացույցը 2020թ համար:
   2.2 էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայության վճարման ժամանակացույցը 2020թ համար:
3. Սպառողի վավերապայմաններում «Հ/հ 900011117034» բառերը փոխարինել «Հ/հ 900011144079» բառերով:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում **Կողմերի** ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է 2020թ. հունվարի 1-ից, **Կողմերի** միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
5. Սույն համաձայնագիրը հանդիսանում է **Պայմանագրի** անբաժանելի մասը:
6. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր **Կողմի** համար:

**Կողմերի հասցեներն ու ստորագրությունները**

| **Մատակարար՝** | **Սպառող՝** |
|---|---|
| «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ | ՀՀ Պաշտպանության նախարարություն |
| Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ամիրյան 127 | Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Բագրևանդի 5 |
| Գլխավոր տնօրեն՝ | Նախարարի տեղակալ՝ |
| Կ. Հարությունյան | Մ. Ղամբարյան |
| (ստորագրություն, անուն, ազգանուն) | (ստորագրություն, անուն, ազգանուն) |
| Կ. Տ. | Կ. Տ. |